Ագրոանտառաբուծության սեմինարաշարի հերթական սեմինարի թեման է «Կայուն գյուղատնտեսության խթանումն ագրոանտառաբուծության միջոցով. «Ackerbau(m)» ծրագրի ռազմավարությունն ու բացահայտումները»:

«Ackerbau(m)» ծրագիրը կայուն գյուղատնտեսական նախաձեռնություն է, որը նախաձեռնել է Էբերսվալդեի կայուն զարգացման համալսարանը 2017թ.-ին: Ծրագրի հիմնական նպատակն է խթանել ագրոանտառաբուծությունը Գերմանիայում: Այն իրենից ներկայացնում է ագրոանտառաբուծության երկու փորձադաշտ, որտեղ ներկայացված է ծառերի և թփերի բազմազան տեսակների, ինչպես նաև ինտեգրված ուսումնասիրության մոդուլ: Այս մոդուլն ուսանողներին հնարավորություն է տալիս հետազոտություններ անցկացնել փորձադաշտերի վերաբերյալ և համապարփակ պատկերացում կազմել ագրոանտառաբուծության վերաբերյալ:

Սեմինարի խոսնակ Լեա Մարտետչլագերը կներկայացնի «Ackerbau(m)» ծրագրի ամփոփումը՝ ներառյալ վերջին հինգ տարիների հետազոտության արդյունքները:

Սեմինարը տեղի կունենա

հունիսի 13-ին՝ ժամը 15:00-ին, Ագրիթեք Ինկուբատոր լսարանում տեսակապով (Zoom)

Սեմինարի լեզուն անգլերենն է՝ համաժամանակյա հայերեն թարգմանությամբ:

Մասնակցության համար գրանցվեք մինչև **հունիսի 10-ը՝ <u>առցանց</u>:**

Լեա Մարտետչլագերը հանդիսանում է «Ackerbau(m)» ծրագրի թիմի անդամ 2021 թվականից:

Նա սովորում է Միջազգային անտառային էկոհամակարգերի կառավարում Էբերսվալդեի կայուն զարգացման համալսարանում:

Ուսումնառությունից առաջ և ընթացքում նա ագրոանտառաբուծության գործնական փորձ է ձեռք բերել Իսպանիայում, Նեպալում և Գերմանիայում տեղակայված ագրոանտառային տարբեր ծրագրերում: